

ԱՎԱՆԴ “ՃԿՈՒՆ”

«Յունիբանկ» ԲԲԸ-ի խորհրդի 19.06.2025թ.-ի որոշման համաձայն, բանկի ներքոնշյալ սակագները գործել են մինչև 07.07.2025թ.:

Ավանդի ներդրման արժույթը	ՀՀ դրամ 100,000 - 100,000,000*	ԱՄՆ դոլար 250 - 250,000*	Եվրո 250 - 250,000*
Ավանդի ներդրման ժամկետը	730 օր		
Տոկոսների վճարման կարգը	Ամենամսյա - Քարտային հաշվին / Բանկային հաշվին		
Տարեկան տոկոսադրույք	ՀՀ դրամ 9%	ԱՄՆ դոլար 3.5%	Եվրո 2%
Տարեկան տոկոսային եկամտաբերություն	ՀՀ դրամ 9.38%	ԱՄՆ դոլար 3.56%	Եվրո 2.02%
Ավանդի գումարի ավելացում	Թույլատրվում է կատարել առանց գումարային և քանակային սահմանափակման՝ ավանդի գործողության ողջ ընթացքում:		
Ավանդի գումարի նվազեցում	Ավանդի ներդրման օրվանից մինչև 90 օր ներառյալ ժամանակահատվածում ավանդի նվազեցում չի թույլատրվում: Ավանդի ներդրման 91-րդ օրվանից սկսած թույլատրվում է ավանդի գումարի մասնակի նվազեցում՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի:		
Ավանդի պայմանագրի խզում	1. Ավանդատուի պահանջով ավանդի ներդրման օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ ժամանակահատվածում՝ ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում, իրականացվում է ավանդի ներդրման պահից մինչև ընդհատման նախորդ օրը հաշվարկված տոկոսագումարի վերահաշվարկ և վերադարձվող գումարի նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են տվյալ պահին Բանկում գործող ավանդի արժույթի ցպահանջ ավանդի տոկոսադրույքով: 2. Ավանդի ներդրման 91-րդ օրվանից սկսած ավանդային պայմանագրի վաղաժամկետ խզման դեպքում հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկ չի իրականացվում:		
* Յուրաքանչյուր արժույթով թույլատրվում է ներգրավել մինչև առավելագույն գումարի չափով ավանդ: Առավելագույն գումարը			

գերազանցող ավանդների համար տոկոսադրույքները սահմանվում են պայմանագրային հիմունքներով:
Ժամկետային ավանդ, որը նախատեսված է ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար:
Հաճախորդի ցանկությամբ տոկոսները կարող են ավելացվել (կապիտալացվել) ավանդի մնացորդին:
Ավանդի արժույթի փոխարկում չի թույլատրվում:
Բոլոր ավանդատուներին տրամադրվում է նվեր՝ UNIPAY կոմունալ վճարումների միասնական համակարգի քարտ:
Բանկի Ավանդատուներին և/կամ Բանկի պարտատոմսերում ներդրում կատարողներին, անվճար տրամադրվում է հետևյալ տեսակի վճարային քարտեր քարտի գործողության ողջ ժամանակահատվածում (3 տարի) տարեկան սպասարկման վճար չի գանձվում՝
1,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում՝ VISA Classic
10,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում՝ VISA Gold
20,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում՝ VISA Signature
50,000,000 ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի գումարի դեպքում՝ VISA Infinite